ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 24.12.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-37/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.02.2015թ. N 3527-15 գրությամբ ներկայացված «Բիոտեխնոլոգիա» (ՀՎՀՀ՝ 90030133) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-37/15 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-37/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 22.12.2015թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 02.02.2015թ. N 3527-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 29.01.2015թ. ԴՎԱ/152 գրության պատճենը:

2. **<u>«Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 05.02.2015թ. թիվ 09/032-179 գրությամբ դիմել է Ընկերությանը:

«Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ն նշված գրությանը պատասխան չի ներկայացրել:

Կենտրոնը 19.03.2015թ. թիվ 09/032-489 գրությամբ ծանուցել է Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերի ուսումնասիրման 06.04.2015թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման վերաբերյալ, սակայն վերջինս չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նշված քննարկմանը:

Ընկերությունը 13.10.2015թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կազմակերպված քննարկմանն ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը և 16.10.2015թ. թիվ 33 գրությամբ ներկայացրել է իր գրավոր դիրքորոշումը, համաձայն որի՝ տվյալ ժամանակահատվածում հակառակորդի դիվերսիոն խմբերը ներթափանցել են տվյալ անտառահատված /Քարվաճառի ուղղությամբ/, որտեղից պիտի դուրս հանվեր արդեն պատրաստի վառելափայտը, սակայն մարդկանց կյանքի անվտանգությունից ելնելով՝ պաշտպանության բանակի և հատուկ ծառայությունների կողմից արգելված է եղել մուտքը տվյալ անտառահատված:

Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտնել է, որ 2014թ. աշնանային անձրևային եղանակների պատճառով չի մատակարարվել Պայմանագրով սահմանված քանակից 298 խմ վառելափայտ:

«Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Պատվիրատուի և Ընկերության միջև 2014թ. հոկտեմբերին կնքվել է լրացուցիչ պայմանագիր՝ 420 խմ վառելափայտի մատակարարման մասին: Համաձայն բանավոր պայմանավորվածության՝ ենթամատակարարման պայմանագրով նշված խմբաքանակը պետք է մատակարարեր մեկ այլ կազմակերպություն: Վերջինս ևս չի մատակարարել վառելափայտը:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

Պատվիրատուն 29.01.2015թ. ԴՎԱ/152 գրությամբ ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության և Ընկերության միջև 11.04.2014թ. կնքված «ՓՇՀԱՊՁԲ-10/1-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) և Պայմանագրի անբաժանելի մասը համարվող հավելվածների պատճենները, ինչպես նաև Պայամանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցման և այն լուծելու համար հիմք հանդիսացած գրությունների պատճենները:

Կենտրոնը 11.12.2015թ. թիվ 01/04.1/3699-15 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով հաշվարկված վնասի, տույժի և տուգանքների գումարներն Ընկերության կողմից վերականգնելու վերաբերյալ՝ առանձին նշելով վերոհիշյալ գումարների չափերը:

Պատվիրատուն 21.12.2015թ. ԴՎԱ/3103 գրությամբ հայտնել է, որ Ընկերության նկատմամբ հաշվարկվել են՝ 677672 (վեց հարյուր յոթանասունյոթ հազար վեց հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված տույժ, 248500 (երկու հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ տուգանք և տուժանք 4970005 (չորս միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար հինգ) ՀՀ դրամ, որոնք Ընկերության կողմից չեն վճարվել:

3. <u>ՍՑ-ԳԲԽ-37/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 22.12.2015թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՀՀ ֆինանսների նախարարության 02.02.2015թ. N 3527-15 գրությամբ ներկայացված «Բիոտեխնոլոգիա» (ՀՎՀՀ՝ 90030133) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 3 տարի ժամկետով:

<u>5. ՍՑ-ԳԲԽ-37/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 02.02.2015թ. N 3527 գրությամբ «Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ի միջև 11.04.2014թ. կնքված «ՓՇՀԱՊՁԲ-10/1-1» ծածկագրով վառելափյատի մատակարարման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում մատակարարել Պայմանագրի Հավելված 1՝ Տեխնիկական բնութագրով, նախատեսված ապրանքներ:

3. Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է մատակարարել ապրանքը Պայմանագրի Հավելված 2՝ Գնման ժամանակացույցով, սահմանված ծավալներով և ժամկետներում:

4. Պայմանագրի Հավելված 1՝ Տեխնիկական բնութագրի 1-ին կետով սահմանվել է Ընկերության վառելափայտ մատակարարելու պարտականությունը:

5. Պայմանագրի Հավելված 2՝ Գնման ժամանակացույցի 1-ին կետով սահմանվել են ապրանքի՝ 2662խմ-ի 2-րդ և 3-րդ եռամսյակներում, յուրաքանչյուրում 3 մասնաբաժնով մատակարարման պարտականությունը, համապատասխանաբար՝ 240խմ, 414խմ, 453խմ և 335խմ, 586խմ, 633խմ:

6. Պայմանագրի 9.2 կետի համաձայն՝ Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր Համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

7. Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող 26.06.2014թ. Փոփոխություն N 1-ի 1-ին կետի «ա» ենթակետով կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են Պայմանագրի գնման ժամանակացույցում 2-րդ եռամսյակում մատակարարվելիք վառելափայտից 600 խմ-ի մատակարարման ժամկետները 2-րդ եռամսյակից տեղափոխել 3-րդ եռամսյակ:

8. Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող 30.09.2014թ. Փոփոխություն N 3-ի 1.1 կետի համաձայն՝ կողմերը, հիմք ընդունելով ապրանքի լրացուցիչ քանակի ձեռքբերման անհրաժեշտության և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, որոշեցին մինչև Պայմանագրի 20 տոկոսի չափով ավելացնել «Վառելափայտ» ապրանքատեսակի քանակը՝ համաձայն Փոփոխության Հավելված 1-ի:

9. Փոփոխություն N 3-ի Հավելված 1՝ գնման ժամանակացույցով սահմանվել է Ընկերության 4-րդ եռամսյակում մատակարարման վայրը, ժամկետը (ոչ ուշ քան 20.12.2014թ.) և քանակը (420խմ)

10. ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.01.2015թ.-ին՝ 30.09.2014թ. կնքված Փոփոխություն N 3–ի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը 2014թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում 718խմ վառելափայտը մինչև գնման ժամանակացույցով նախատեսված վերջնաժամկետը (20.12.2014թ) չմատակարարելու հիմքով Ընկերությանը ծանուցել է պայմանագիրը 15.01.2015թ. միակողմանի լուծելու մասին:

11. Ընկերության նկատմամբ հաշվարկվել են՝ 677672 (վեց հարյուր յոթանասունյոթ հազար վեց հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված տույժ, 248500 (երկու հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ տուգանք և տուժանք 4970005 (չորս միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար հինգ) ՀՀ դրամ, որոնք Ընկերության կողմից չեն վճարվել (ընդամեն՝ 5896177 /հինգ միլիոն ութ հարյուր իննսունվեց հազար հարյուր յոթանասունյոթ/):

<u>6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Քննելով ՍՑ-ԳԲԽ-37/15 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

Խորհուրդը՝ ուսումնասիրելով Պատվիրատուի 29.01.2015թ. ԴՎԱ/152 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ի միջև 11.04.2014թ. կնքված «ՓՇՀԱՊՁԲ-10/1-1» ծածկագրով վառելափյատի մատակարարման պայմանագիր հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 3 տարի ժամկետով եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ նույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհդրի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Խորհուրդը հայտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ի միջև 11.04.2014թ. կնքված «ՓՇՀԱՊՁԲ-10/1-1» ծածկագրով վառելափյատի մատակարարման պայմանագրի համաձայն Ընկերությունը պարտավորվել է մատակարարել վառելափայտ: Պայմանագրի Հավելված 2՝ Գնման ժամանակցույցի համաձայն՝ վերջինս պետք է վառելափայտը մատակարարել 2-րդ և 3-րդ եռամսյակներից յուրաքանչյուրում 3 մասով՝

- 2-րդ եռամսյակ՝ 240խմ, 414խմ, 453խմ **(ընդամենը՝ 1107խմ)**
- 3-րդ եռամսյակ՝ 335խմ, 586խմ, 633խմ **(ընդամենը՝ 1554խմ)**

Փոփոխություն N 1-ի 1-ին կետի «ա» ենթակետով կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են Պայմանագրի գնման ժամանակացույցում 2-րդ եռամսյակում մատակարարվելիք վառելափայտից 600 խմ-ի մատակարարման ժամկետները 2-րդ եռամսյակից տեղափոխել 3-րդ եռամսյակ:

Այսպիսով, Ընկերությունը 3-րդ եռամսյակին պետք է մատակարարեր Պայմանագրի Հավելված 2՝ Գնման ժամանակցույցով 3-րդ եռամսյակի համար նախատեսված **1554խմ և** Փոփոխություն N 1-ի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված ևս ***600խմ*** վառելափայտը ***(ընդամենը 2154խմ):***

Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող 30.09.2014թ. Փոփոխություն N 3-ի 1.1 կետի Հավելված 1՝ Գնման ժամանակացույցի համաձայն Ընկերությունը մինչև 20.12.2014թ. պարտավորվել է մատակարարել ևս **420խմ** վառելափայտ:

Պատվիրատուի 29.01.2015թ. ԴՎԱ/152 գրության համաձայն՝ Ընկերությունը չի մատակարարել 3-րդ եռամսյակին մատակարարվելիք վառելափայտի 298խմ, ինչպես նաև 4-րդ եռմասյակի մինչև 20.12.2014թ. մատակարարվելիք 420խմ վառելափայտը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.01.2015թ.-ին՝ 30.09.2014թ. կնքված Փոփոպխություն N 3–ի համաձայն ՀՀ պաշտպանության նախարարությանը 2014թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում 718խմ վառելափայտը մինչև գնման ժամանակացույցով նախատեսված վերջնաժամկետը (20.12.2014թ) չմատակարարելու հիմքով Ընկերությանը ծանուցել է պայմանագիրը 15.01.2015թ. միակողմանի լուծելու մասին:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերությունը, չմատակարարելով 3-րդ եռամսյակին մատակարարվելիք վառելափայտի 298խմ, ինչպես նաև 4-րդ եռմասյակի մինչև 20.12.2014թ. մատակարարվելիք 420խմ վառելափայտը, ***ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրային պարտավորությունները***:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ավելի քան մեկ անգամ խախտվել են և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը մինչև բողոքարկման խորհրդի կողմից սույն որոշման կայացումը Ընկերության կողմից չի վերականգնվել (հինգ միլիոն ութ հարյուր ինսունվեց հազար հարյուր յոթանասունյոթ ՀՀ դրամ), Խորհուրդը գտնում է, որ առկա են հիմքեր «Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 02.02.2015թ. N 3527-15 գրությամբ ներկայացված «Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 90030133) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 90030133) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում «Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 90030133) կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 3 տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Վարդան Ավետիսյան**

Անդամներ՝ **Երանուհի Սամվելյան**

Հրաչյա Ավետիսյան